№ 169 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4 (16) 1878 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4 (16) № 169

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ պէտք է անել գաղթականների հետ։— Ներքին տեսութիւն։ Նամակ Երևանից։ Նամակ Վերին-Ագուլիսից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։ Արտաքին տեսութիւն։ Միջին-Ասիա։ Սիսի Կաթողիկոսի հեռագիրը։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Ցայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ԻՆՉ ՊԷՏՔ Է ԱՆԵԼ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Զը նայելով որ թէ մասնաւոր անձինք, թէ լրագրութիւնը և թէ վերջապէս վարչութեան ներկայացուցիչները ամեն միջոցներ գործ դրեցին որ հայերը չը գաղթեն Թիւրքաց Հայաստանից դէպի Ռուսաստանի նոր նուաճած երկիրները, այնու ամենայնիւ, ինչպէս մեզ հաղորդում են Ղարսից, Աշաշկերտի կողմերի հայերը թւով մօտ եօթ հազար հոգի այրեցին իրանց բնակարանները և խոտի ու ցորենի դէզերը և գաղթեցին Ղարսի նահանգը։

Այժմ այդ ողորմելիները իրանց բոլոր ունեցածը-չունեցածը կորցնելով, Ղարսի նահանգի մէջ տեղից տեղ թափառելով, ապասում են ռուսաց կառավարութենից իրանց վիճակի վճռվելուն։ Ինչպէս յայտնի է Հայաստանի մէջ ձմեռը շատ է հասնում, ուրեմն խեղճերը դեռ ոչինչ հող չունենալով, ոչինչ հաստատ տեղ, ոչինչ ապաստան չը գտնելով, կարող են մեծ վտանգների ենթարկվել առաջիկայ ձմեռվայ ժամանակ։

Ռուսաստանին նոր միացած Հայաստանի մասը բնակեցնելու համար ի հարկէ ամենայարմար գիւղական ժողովուրդը հայերն են։ Ոչ ոք չէ կարող այնքան լաւ դիմանալ Հայաստանի բարձրադիր տեղերի խիստ կլիմային, որքան իրանք հայերը։ Բացի սորանից բոլոր Կովկասեան ազգութիւններից հաղիւ թէ հայերի պէս աշխատասէր և ընդունակ մի ուրիշ ազգութիւն գտնվի։

Մենք համոզված ենք որ տէրութիւնն էլ այդ կարծիքի է և նա այդ շատ անգամ ապացուցեց աշխատելով բնակեցնել գաղթած հայերին Կովկասեան այլ և այլ տեղերում և միշտ գոհ է մնացել հայոց գիւղական ազգաբնակութեան ճշմարիտ քաղաքակրթական յատկութիւններից։ Որտեղ հայերը զետեղվեցան, նրանք մըշակեցին, հարստացրին, ծաղկեցրին երկիրը։

Տէրութիւնը այս վերջին պատերազմից յետոյ, ինչպէս երևում է նորա բոլոր պաշտօնական կարգադրութիւններից, չէր կամենում որ Թիւրքիայի հայերը թողնեն իրանց հայրենիքը։ Բայց այժմ, երբ մի քանի հազար հայեր այնու ամենայնիւ եկան նստեցին Ղարսի նահանգում, մեր կարծիքով անհնարին կը լինի գաղթականներին յետ դարձնել իրանց հայրենիքը, մանաւանդ աչքի առաջն ունելով ձմեռվայ ժամանակի ցուրտը և տարվայ այդ եղանակում ճանապարհների դժուարութիւնը։

Ուրեմն մենք հաւատացած ենք որ ինչ և իցէ վերջը տէրութիւնը կը բաժանի գաղթածներին նոր հողեր իր նոր նուաճած երկրում այսինքն Ղարսի նահանգում։

Բայց այդ նոր ստացած հողերից հայ գաղթականը կարող է կատարելապէս օգուտ քաղել միայն գարնան երևալուն պէս և պէտք է ամբողջ ձմեռվայ ընթացքում մերկ և չը պատսպարված, կրի ամեն տեսակ նեղութիւններ, ցուրտ, չքաւորութիւն, գուցէ շատերը այդ նոր գաղթականներից իրանց կեանքն էլ կը զոհեն ձմեռվայ անհիւրասէր խստութեանը։

Ուրեմն, եթէ մինչև գարունը գաղթականները վերադառնան էլ իրանց առաջվայ բնակված տեղերը, այնու ամենայնիւ ձմեռվայ ընթացքում չը կարողանալով հողեր վարել, ողորմելիներին հարկաւոր կը լիներ նիւթական կամ լաւ է ասել դրամական օգնութիւն մինչև գարնան գալը։

Իսկ այդ օգնութիւնը կարող է լինել կամ կառավարչական, կամ մասնաւոր, հասարակական բարեգործութեան վրա հիմնված օգնութիւն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

29-ին սեպտեմբերի

«Մշակի» խմբագրութեանը խոստացել էի նամակներ շուտ շուտ գրել, ներողութիւն եմ խնդրում, որ խոստումս իր ժամանակին չը կատարեցի։ Մեր երկրի և ժամանակի անձերից, խօսքս հայերի մասին է, ով է իր խոստումները ժամանակին կատարում որ ես կատարէի. մինթէ ես էլ հայ չեմ, ես էլ մեր ժամանակի ծնունդը չեմ արդեօք։ Ես կարող եմ հազարաւոր փաստեր առաջ բերել խօսքիս ապացուցութեան համար որ ոչ ոք իր խոստումը ճշդիւ չէ կատարում. ոչ ոք էլ նրան չէ յանդիմանում։ Փորձիր մեր կօշկակարին, դերձակին, հիւսնին, ոսկերչին, դարբնին, մանաւանդ ժամագործին կամ մի այլ արհեստաւորին յանձնել մի որ իցէ գործ, և խընդրիր որ անշուշտ քո ուզած ժամանակին յանձնարարութիւնդ պատրաստ լինի։ Նոքա կը խոստանան, զանազան երաշխաւորութիւն կը տան քեզ, իրանց խոստումը ճիշդ ժամանակին կատարելու, բայց նշանակած ժամանակի վրայով կանցնեն տասնապատիկ և հարիւրապատիկ աւելի միջոցներ, նրանք դեռ ևս յանձնարարութիւնդ իրագործած չէն լինի, որովհետև մեզանում իր ժամին ու ժամանակին չէ կատարվում և ոչ մի գործ։ Բայց վերջ ի վերջոյ բերած գործն էլ քո ուզածը կը լինի արդեօք. ի հարկէ չէ։ Դու ուզել ես կօշիկ, նա կարել է կիսակօշիկ. դու ուզել ես բաղկաթոռ, նա շինել է գահաւորակ. դու տուել ես բրիլիանտ, նա բերել է Սիբիրի քար....

Անցիր վաճառականներին. գնում ես Սամսոնի թիւթիւն առաջնակարգ տեսակից, դուրս է գալիս չորացրած աւելուկ. խոստանում է ուղարկել քիչ Դալմի հին գինի, ուղարկում է չամչի ջրով քաղցրացրած քացախ. առնում ես Պապովի թէյ, դուրս է գալիս թանթրվենու տերև. տալիս ես հաստատուն մուրհակով փող, բայց մինչև յետ ստանալդ կամ ինքն է սնանկանում, կամ քեզ է սնանկացնում։ Վաճառական լինել և խօսքին ու գործին ճիշդ, կը նշանակէ ուղղի դրուստ պոչ լինել մեր երկրում։ Ընդհակառակը, մեր երկրում վաճառական լինել, այդ նշանակում է խաբել ու խաբվել. կամ թէ սնանկանալով հարստանալ և ուրիշին աղքատացնել։—Մինչև անգամ բարեգործական նպատակով նուիրած փողերն էլ չեն տալիս իր ժամանակին մեր պատւելիները։ Մի օր խանութների առջևից անցնելիս նկատեցի որ հոգևոր դպրոցի հոգաբարձուներից մէկը և տեսուչը տաք-տաք վիճում են մի սափրիչի հետ, որ այժմ կուպեցը է դառել. հարցրի պատճառը. իմացայ որ պ. սափրիչը կուպեցը մի ժամանակ թեմական դպրանոցին մուրհակով 100 ռուբլ է խոստացել տալ. խոստացած ժամանակից 7—8 տարի է անցել և հիմի որ ուզում էին, հոգաբարձուի ձեռքից մուրհակը առնում պատռում է ասելով. «Ձեր թմբրանոցին ինձպէս հազար մարդ նուէր է խոստացել և հազարից հաղիւ թէ 40—50-ը կատարել են իրանց խոստումը. լաւն այն է որ ես էլ չատերիցը մէկը լինեմ, քան թէ այդ մի քանիսներին հետևեմ։» Խեղճ հոգաբարձուն ճարահատված՝ 100-ի փոխանակ 30 ռուբլ առաւ և յետ դարձաւ ասելով. «եղբայր, մեզանում ոչ ոք իր խօսքին տէր չէ. շատը որ չեն տալիս, քիչն էլ մի մերժիս։» Բայց չասէք թէ այդ միայն Երևանումն է այդպէս լինում, չէ. մի և նոյնը լինում է և Ագուլիս, Շուշի, Շամախի, Ալէքսանդրապոլ, Ախալցխայ, Նախիջևան և այլ քաղաքներում. ամեն տեղ մի և նոյն երևոյթներն են նկատվում.—խոստացիր, մի կատարի. կատարիր, բայց քո ուզած ժամանակին և ոչ թէ խոստացած միջոցին. այս է մեր երկրի ընդհանուր օրէնքը.... Հարկաւոր չէ կարծել թէ մեր արհեստաւոր և վաճառական դասերն են միայն որ իրանց խօսքի ու խոստմանը տէր չեն. ոչ, այս սխալ կը լինէր։ Մեր բոլոր դասակարգերի բազմութիւնը նոյնն է անում։

Վերցնենք օրինակի համար մեր խմբագիրներին. «Արարատ» խմբագիրը խոստանում է ամիսը մի անգամ դուրս բերել իր հիանալի ամսագիրը. կատարում է արդեօք իր խոստումը. «Փորձը» պէտք է երէք ամիսը մի անգամ երևար. ուր է. «Մանկավարժական թերթ» խմբագիրը խոստանում է մեզ մանկավարժական առողջ գաղափարներ շնորհել. կատարում է արդեօք իր խոստումը։ Իսկ «Հայկական Աշխարհը...», բայց ներեցէք, չը գիտեմ նա ինչ է խոստացել, գիտեմ միայն որ սատանաներին նա շատ է սիրում և միշտ նրանց վրա է խօսում ու ապացուցանում է նրանց գոյութիւնը... այդ էլ գուցէ մի մեծ ճշմարտութիւն է։

Եթէ որ մեր դասակարգերը դերասանի պէս աշխարհիս բեմի վրա ներկայացնելու լինէին իրանց յանձնված դերերը, կարծում եմ որ, ոչոք այնքան շնորհակալական ծափահարութիւն չէր ստանալու, ինչքան որ ստացան մեր Երևանի դերասաններից շատերը, չը նայելով որ ամսի 24-ին ներկայացրած Դուրիանի ողբերգութենից յանկարծ կատակերգութիւն չինեցին, և հանդ. Տէր Գրիգորեանցի «Պառաւներին խըրատ» զաւեշտիցն էլ կատարեալ անմտութիւն.... Ես միայն այն երեկոյին հասկացայ որ՝ ինչ կերպ կամենաս կատարիր դերդ, մի և նոյնն է. աշխարհիս մէջ, մանաւանդ մեզանում, միշտ ծափահարողներ կունենաս և զարմանալին այն է որ՝ ինչքան մեծ յիմարութիւններ անես, այնքան շատ ծափահարողներ կը ճարես։ Մեզանում դեռ ևս չեն հասկացել որ թատրոնը միայն փող աշխատելու հիմնարկութիւն չէ. չեն հասկացել որ առանց կառավարչի (ռեժիսերի), ոչ մի դերասան իր ժամանակին բեմը չի դուրս գայ. վերջապէս չեն հասկացել որ առանց դերն իմանալու բեմ դուրս գալը՝ փոքր ինչ ամօթ է։ Ես էլ չեմ խօսում այն հանգամանքի վրա որ եթէ համարով տոմսակներ են տրվում եկողներին, պէտք է որ ամեն մարդուն իր ստացած տոմսակի թւահամարին համաձայն էլ նստելու տեղ տրվի. այս տարրական ճշմարտութիւններն էլ որ չեն հասկանում մեր թատրոնի մեծաւորները, էլ կարելի է հաւատալ որ նրանք թատրոնին կրթական նշանակութիւն կը տային և ոչ թէ փող աշխատելու միջոց կը համարէին նրան։ Ամենալաւ բանն էլ, երբ որ իր բնական նպատակին չէ ծառայում, կարող է օգուտ բերելու փոխարէն՝ վնաս բերել։ Թատրոնն ինքն ըստ ինքեան լաւ բան է. բայց երբ որ նա փող ժողովելուց զատ, ուրիշ բարձր նպատակի չի ծառայի, այն ժամանակ նա վնասակար և վտանգաւոր հետևանք կարող է ունենալ ժողովրդի զարգացման և առաջադիմութեան համար։

Ողորմութիւն տալու պէս էլ ինչ լաւ բան կայ արդեօք. բայց երբ որ տուած ողորմութիւնդ տեղին և ժամանակին յարմար չէ, երբ որ այդ ողորմութիւնը կարող է ծուլութեան, անհոգութեան և անգործութեան առիթ դառնալ, երբ որ այդ անհաշիւ ողորմութիւնը կարող հազարաւոր Թիւրքաստանցի հայերի սիրտը դէպի գաղթականութիւն և մուրացկանութիւն գրաւել ու քաշել, այն ժամանակ տուած ողորմութիւնդ թշուառացնելու առիթ կը համարվի և ոչ թէ կարեկցութեան նշան։—Մեր Խրիմեան հայրիկը նզովում է այն մարդուն որ իր իրաւունքները պաշտպանելու համար զինավարժութիւն չէ սովորում, զէնք գործածել չէ սովորում։ Այս հիանալի միտք է. բայց երբ որ պատիւ և անձնական ու մարդկային իրաւունք պաշտպանող զէնքը դառնայ միջոց հարստահարութեան և մարդասպանութեան, երբ որ անմեղի արիւնը թափելու և սեփականութիւնը յափշտակելու համար գործ դնվի, այն ժամանակ անիծած կը լինի այդ կերպ զէնքի գործածողը թէ հայ լինի նա և թէ Թուրք։—Ամեն բան իր բնական և բարոյական նպատակին պէտք է ծառայէ։ Գործողութեան համար ժամանակ է հարկաւոր և այդ ժամանակը պէտք է յարմարի գործողութեան բուն նպատակին։

Եթէ որ Պարտիզեկցի Վահան վարդապետը մեր Վեհափառին ներկայանալու համար ի զուր տեղը 7 օր ժամանակ չը կորցնէր. եթէ որ Էրզրումի Յարութիւն սրբազանը չարդելէր պատրիարքի կոնդակը եկեղեցու մէջ կարդալու և հարկաւոր նախազգուշութիւնները ժողովրդին հաղորդելու, հաւատացած եմ որ ի զուր տեղը հաղարաւոր ալաշկերտցիներ իրանց տունը, տեղը, հունձը, փունջը չէին կրակի իրանց ձեռքով և չէին գաղթի իրանց տեղերից, կարծես թէ մեր երկրում հողն ու փողը նրանց համար պատրաստ է։

Այս ամենի համար պատասխանատու են այն անձինք, որք իրանց դանդաղամիտ բարձրութեամբ, չը կարողացան գնահատել ժամանակը. արդելք եղան գործողութեան ընթացքին. չը կատարեցին իրանց սրբազան պարտքը հայութեան ապագայի համար, կարծելով թէ՝ հայի լուսաւոր ապագան բաց է անելու իրանց խայտառակ գործերը։

Այսպէս ուրեմն մեղանում ոչ ոք իր պարտքը և խոստումը չէ կատարում. միթէ ինձ էլ նեբելի չէ մի և նոյնը։

Հին-Բարեկամ

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

24 սեպտեմբերի

Ագուլեցին եթէ ունի մի վատ սովորութիւն,— դա ուրիշի, մանաւանդ երիտասարդ տղայոց և աղջկերանց վրա խօսելը՝ բամբասելն է։ Թէև բամբասանքը առ հասարակ կանանց է յատկանիշ, բայց մեր մարդիկը ևս պակաս չեն մընում կանանցից այդ արհեստի մէջ։ Նախ և առաջ խօսենք կանանց վրա։ Եթէ տեսնէք մեր կանանց խումբ-խումբ ժամ գնալիս, անշուշտ կասէք թէ ինչ բարեպաշտ, ջերմեռանդ յոյսերով են, բայց եթէ մի օր դաս այստեղ և սուրբ Գրիգորի, Շմաւոնի կամ այլ եկեղեցիների դրանը կանգնես և լսես նրանց խօսակցութիւնը, բամբասանքը դու սարսափած մի այլ գաղափար կը կազմես նրանց վրա։ Մեր կանայքը, եթէ կարելի է այսպէս ասել, ոչ թէ աղօթք անելու, այլ բամբասելու համար են միայն ժամ գնում։

Բերենք այստեղ մի քանի օրինակ։

—Բաջի, խօսում են եկեղեցու դրանը մի քանի կանայք, Արամը Նինոյին սիրում է հա։

—Հա, ինչպէս չէ, պատասխանումէ մի կարճահասակ կին, ասում են, սիրահարվել են, գիր (նամակ) են գրում իրար վրա. մինչև անգամ ես ինքս իմ աչքով տեսայ նրանց թև թևի տուած մանգալիս։

—Ախ Տէր-Աստուած, բացականչումէ մի երրորդ, ինչ տիրին է եղել։

—Չէ, Արամը մեղաւոր չէ. մեղաւորը, լիրբը, անամօթը Նինոն է, որ թոյլ է տալիս իրան անծանօթ տղի հետ խօսելու։ Ասումեն էդ լիրբ աղջիկը առաջ ուրիշներին է եղել սիրելիս։

—Վոյ քոռանայ նրա մայրը, էնպէս աղջիկ կը մեծացնեն, էնպէս ազատութիւն կը տան, որ տղերանց հետ համարձակ նստի վերկենայ, խօսայ... ուրեմն Արամը նրան սիրումէ։

—Հա, սիրումէ և խօսք է տուել որ նշանի, ամա խեղճ տղին լաւ են խաբում։

—Ի՞նչպէս։

—Էլ ինչպէս պէտք է լինի սրանից պարզ բան. Նինոյի մայրը և եղբայրը Արամին միշտ տանում են իրանց տուն բերում, պատիւ տալիս, գլուխը իւղում, աչքը քոռացնում, որ ինչ է իրանց լպստած Նինոյին կապեն խեղճ տղի վրա....

Սարսափելի կուրութիւն. եթէ մի երիտասարդ ժամանակ անցկացնելու համար գնում գալիս է մէկի տունը և փոխադարձաբար մէկ ուրիշին էլ ընդունում է իրա մօտ, ագուլեցին իսկոյն կարծում է թէ այդ մօտ ընկերական յարաբերութիւնների մէջ ծածկված է մի գաղտնիք,—այն է աղջիկ առնել, կամ տալը։ Այո, ագուլեցու կարծիքով մօտ ընկերութիւնը, ընկերական յարաբերութիւնը նշանակումէ աղջիկ առնել և տալը, բայց նա մոռանումէ որ ինչքան և ջահիլի գլուխը իւղեն, աչքերը քոռացնեն, պատիւ տան թէկուզ թև թևի չը տան, չրթունք չրթունք կպցնէին նա դարձեալ չէ նշնվելու, եթէ իսկ սրտով չէ սիրում աղջկան. իսկ եթէ սիրում է այդ բոլորովին ուրիշ հարց է. առանց գլուխ իւղելու էլ կարողէ նշնել և պսակվել, թէկուզ ինչքան որ անամօթ և լիրբ լինէր աղջիկը։ Կարծեմ այսքանը բաւական է կանանց մասին. այժմ մարդկանց։

—Լսել ես, խօսում են մի տեղ ժողովված մի քանի մարդիկ, ասումեն պարոն Պապը իւր հարսին և որդուն լաւ չէ պահում։

—Հա, ասում են, բռնութիւններ է գործ դընում տան մէջ, շատ անգամ հարսին նախատում է, արգելելով նրան տանից դուրս գալ... Այս միջոցին անցնումէ մի նոր մօդայով, շքեղ հագնված, երկար ցիլինդր դրած, ձեռնոցներ հագած և զօնտիկը բռնած մի գեղեցիկ երիտասարդ։

—Սրան տես, սրան, բամբասում են խեղճի յետնից, քանի տարի շարունակ արտասահմանում նստեց թէ ինչ է ուսում առնում, հօր փողերը անխնայ փչացրեց, կերաւ և վերջն էլ մի տուտուց, ֆանֆարօն մարդ դուրս եկաւ ու դարդակ խելքով տուն եկաւ... ափսոս փողեր։

Զարմանալի բան, ագուլեցին յանդգնում է մինչև անգամ դատողութիւն տալ այն մարդկանց վրա, որոնց խելքը հաղար և գոնէ միլիոն անգամից աւելի է իր կոպիտ և անտաշ խելքից։

Անցնումէ մի ուրիշ երիտասարդ, դարձեալ բամբասանք։

—Ոհ, ինչ շարլատան, փուչ տղայ դուրս եկաւ սա, ասում են նոյները։

—Ինչու համար է շարլատան, պատահմամբ լսելով այս խօսակցութիւնը, հարցնում եմ ես։ Զեզ ինչ է արել նա։

—Ոչինչ, ինչ պէտք է անի, լսում եմ պատասխան, ինչ որ արել է իրան է արել։ Բայց ասում են որ շատ շարլատան տղայ է, թ... քաղաքում մեծ գումար է մսխել և ամենայիմար ջահիլութիւններ է արել...

—Հա, հա, հա...ծիծաղում եմ ինձ ու ինձ, փող է մսխել, ջահիլութիւն է արել... Բայց ով ձեզանից չէ արել այդ բանը, խնդրեմ ինձ ասէք։ Եւ միթէ որ նա առաջ փող էր մսխել, դորանով լիրբ, անբարոյական, շարլատան դարձաւ ձեր աչքում։ Միթէ նա ևս այնպէս մարդ չէ, ինչպէս դուք։ Մի՞թէ նա չունի և լաւ կողմեր, որ արժանի լինէր գովասանութեան։ Մի՞թէ չէ կարելի տեսնելով նրա լաւ կողմերը յարգել, սիրել նրան, խօսել նրա հետ և յարաբերութիւններ ունենալ....

Ահա մեր ագուլեցու ամենավատ սովորութիւններից մէկն էլ,—խօսել և հասկացածի և չը հասկացածի մասին. և վերջապէս բամբասել երիտասարդների վրա, որոնք չեն ճանաչում, և ամենաչնչին բանը մի ահագին չարադրութիւն են շինում։ *)

Գողթնեցի

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Աստրախան, 13 սեպտեմբերի

Ժողովելով Աստրախանի երիտասարդ ընկերակիցներիս մէջ մի քանի բուբլ փող, երէկ ձրիապէս ճանապարհեցի մինչև Բագու մի պոլսեցի հայ՝ Հաճի-Աստուածատուր Ֆռանկով, մօտ 60 տարեկան անդամալոյծ, որ ճանապարհորդելով իր որդուն գտնելու նպատակով, հասել էր այստեղ Ցարիցինից, որտեղ յուսացել էր գտնել իր որդուն և չէր գտել։ Երկար ճանապարհորդութեան մէջ չար մարդիկ գրկել էին նրան վերջին փողիցը, այնպէս որ առանց կօպէկի մնալով հազիւ հասել էր Աստրախան։

Որդին սրա կարողութեան տէր մարդ է և Ցարիցին տեղեկացել է սա, որ որդին ներկայումս բնակվում է Թիֆլիս։ Տուել եմ նրան նամակ Բագուի բնակիչ մի աղգասէր պարոնի անուամբ, որ միջոց տայ նրան Թիֆլիս հասնելու։

Ուղղելով դէպի ձեզ ներկայ նամակս խնդրում եմ ձեզ, պարոն, որ եթէ հարկաւոր կը համարէք, նրա որդուն տեղեկացնելու համար, հրատարակէք ձեր լրագրի մէջ, որ եթէ ճշմարիտ նրա որդին Թիֆլիս է, շտապի օգնութիւն նրան, որ հաշվելով ամսի 18-ին պէտք է Բագու լինի։

Գրիգոր Մեսոնիկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են ԴԱՐՍԻՑ որ Ռուսաստանին միացած նոր երկիրներում այս րօպէիս գտնվում են մօտ եօթ հազար հոգի հայ գաղթականներ Ալաշկերտի կողմերից եկած։ Գաղթականները սպասում են տէրութեան կարգադրութեան Ղարսի նահանգում հողերը ստանալու համար։

—

Կիրակի հոկտեմբերի 8-ին ԹԻՖԼԻՍԻ Գերմանական կլուբի դահլիճում մասնակցութեամբ տ. տ. Սանդուխտ-Անեանցի, Շամիրամի և պ. Գ. Զմչկեանի կը տրվի մի հայ ներկայացումն յօգուտ մեր ընդունակ դերասան պ. Գ. Տէր-Գաւթեանի։ Կը խաղան «Նինոի նշնուիլը» կոմեդիա երեք գործողութեամբ հեղ. հանգ. Մ. Տէր-Գրիգորեանցի։ Երկրորդ և երրորդ գործողութիւնների անտրակտում պ. Գ. Զմչկեանը կը կարդայ «Հայերուս բաղձանք» Գամառ-Քաթիպայի նոր դեռ չը տպված հեղինակութիւնը։ Պէտք է ասել, որ ներկայացումն բաւական լաւ է կազմած։ «Նինոի նշնուիլը» հանգ. Տէր-Գրիգորեանի գեղեցիկ գրվածքներից մէկն է և եթէ չենք սխալվում, 9 տարուց աւելի է, որ ամբողջապէս չէ ներկայացրած, որովհետև երկրորդ գործողութիւնը կորած էր։ Ցանկալի է, որ ներկայացմանը մասնակցողները բարեխղճաբար վերաբերվէին դէպի իրանց գործը։ Ցոմսակները վաղօրօք կարելի է ստանալ պ. Ե. Ծատուրեանցի խանութում և Զ. Գրիգորեանի գրավաճառանոցում, իսկ ներկայացման օրը Գերմանական կլուբի կասայում։

—

Ներկայ համարում տպված ԵՐԵՒԱՆԻ նամակի հեղինակ Հին-Բարեկամը գրում է մի քանի անկարգութիւնների մասին, որոնք եղել են Երևանի նոր թատրոնում առաջին ներկայացման ժամանակ։ Մենք հաւատացած ենք, որ առաջին ներկայացումն պէտք է ունենար մի քանի պակասութիւններ։ Երևի հայր Մելեանը և թատրոնական խումբը կաշխատեն միւս անգամներին լրացնել այդ պակասութիւնները։ Երևանի ներկայացման թերութիւնները չատ աննշան պէտք է լինեն, եթէ համեմատենք Թիֆլիսի անկարգ ներկայացումների հետ, որոնցից մէկի մասին հետևեալ համարում կը տպենք պ. Գ. Զմչկեանի նամակը։ Մենք կարծում ենք, որ Երևանում շատ լաւ խումբ կարող է կազմվել, եթէ բոլոր այժերը կամենան օգնել թատրոնին։

—

ԹԻՖԼԻՍԻ դաւառում գտնվող Դուբնուկ գիւղի բնակիչներից մէկը օրերումս մտաւ մեր խմբագրատունը և գանգատվեց, որ գիւղի տանուտէրը նրան պատժելու համար բացի ծեծելուց, ոտներից կախել է և այդպէս թողել է մի քանի ժամ, Զենք քննում գիւղացու յանցանքը, բայց ինչքան էլ նա մեծ լինէր, պատիժը սարսափելի է։ Գիւղացին տանուտէրի վրա գանգատ է ներկայացրել Թիֆլիսի նահանգապետին։

—

Մի քանի ժամանակից պ. Ժէրարի ամերիկական ցիրկի ներկայացումները լաւ են գնում։ Հասարակութիւնը այժմ աւելի է այցելում ցիրկը և սաստիկ ծափահարում է երկու նոր եկած ձի հեծնող կանանց։

—

Մեզ հաղորդում են ՍԻՄՖԷՐՕՊՕԼԻՑ, որ այնտեղի դումայն անցեալ տարվանից որոշել է տալ Սիմֆէրօպօլի հայ ծխական երկսեռ ուսում նարաններին տարեկան 300 բուբլ։ Այնտեղի փոխադարձ կրեդիտի բանկի վարչութիւնն էլ որոշել է տարեկան 200 բուբլ տալ Սիմֆէրօպօլի հայ ծխական ուսումնարանին այն պայմանով, որ յիշեալ գումարով տասը չքաւոր մանուկներ ուսում առնեն դպրոցում, և դրանով նրանց համար դասական պլտոյքներ գնվեն։ Ցանկալի կը լինէր որ միւս հայաբնակ քաղաքների այդպիսի հիմնարկութիւններն էլ հետևէին այնտեղի դումայի և բանկի օրինակին։

—

ԶԱՐԴԱԽԼՈՒ գիւղից մեզ հաղորդում են, որ այնտեղ սաստիկ տարածված է ծաղիկ հիւանդութիւնը։ Գիւղի մէջ ընդամենը 120 տուն բընակիչներ կան և դրանց երեխաներից մօտ հարիւրը զոհվել են ծաղիկ հիւանդութեանը մէկ ամիս ու կէսվայ ընթացքում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՋԻՆ ԱՍԻԱՑԻ ՀԱՐՑԸ

«Голосъ» լրագրի Վիէննայի թղթակիցը իր վերջին նամակներից մէկի մէջ մի քանի խորհրդածութիւններ է անում երեք պետութիւնների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Աւստրօ-Ունգարիայի ընդհանուր յարաբերութիւնների՝ սասին Միջին-Ասիայի հարցի վերաբերութեամբ։

«Կօմս Բիկոնսֆիլդ և կօմս Անդրաշի կարող են մխիթարվել, գրում է թղթակիցը։ Ռուսաստանին պատերազմ յայտնելու համար առիթ վերջապէս գտնված է։ Աֆգանիստանի Էմիր Շիր-Ալի չընդունեց գրեթէ մի ամբողջ բանակով շրջապատված անգլիական դեսպանութիւնը։ Շիր-Ալի անպատուեց Անգլիային, ուրեմն պէտք է Ռուսաստանի հետ պատերազմել։ Նա է մեղաւորը, նա դաշնադրութիւն է կապել Էմիրի հետ և այս վերջինը գործում է նրա խրատների համեմատ։ Թիւրքաց սուլթանը չէ կամենում Աւստրիայի հետ դաշնադրութիւն կապել, մերժում է կոմս Անդրաշի ամենամեղմ առաջարկութիւնները, ուրեմն Ռուսաստանը մեղաւոր է, պէտք է Ռուսաստանի հետ պատերազմել։ Նա մեղաւոր է, նրա խորամանկ դիպլոմատիան ազդեց սուլթանի վրա և սուլթանը հետևում է նրա խրատներին։

«Ախ այդ Ռուսաստանը, ասում են երկու պետական մարդիկ Բիկոնսֆիլդ և Անդրաշի, ամեն տեղ խառնվում է։ Պէտք է նրա հետ պատերազմել։ Դրա համար առիթ չը կար, առիթն էլ գտնվեց։ Պատերազմ պէտք է այժմ յայտնել, քանի որ նա նոր կուից թուլացած է։ Եթէ անցնեն 10 կամ 15 տարիներ այն ժամանակ դժուար կը լինի Ռուսաստանի հետ գործ ունենալ։ Դեռ կօնգրէսի ժամանակ երևում էր, որ համաձայնութիւնը ժամանակաւոր է։ Կօնգրէսի ժամանակ Թիւրքիայի առաջին բաժանումն կատարվեցաւ, հարկաւոր է նրան բոլորովին բաժանել և այնպէս, որ Ռուսաստանը ամենափոքր բաժինը ստանայ։ Նրանք որոնք ձգտում էին մեզ հետ դաշնադրութիւն կապել և նրանք, որոնք սպասում էին մեր նշանին, որ միանան մեզ հետ, բոլորը հեռացան մեզանից և այժմ մեր թշնամիներին ձեռք են մեկնել։ Մեր կողմն է միայն Գերմանիայի բարոյական բարեկամութիւնը, բայց թէ ինչ տեսակ է Գերմանիայի այդ զգացմունքը, մենք արդէն տեսանք կօնգրէսի ժամանակ։

«Թողնենք այժմ այդ գործը, որ մենք ունենալու ենք Աւստրօ-Ունգարիայի հետ։ Մեր այդ սիրելի դրացին Անգլիայից աւելի աշխատում է կռուել մեզ հետ։ Անգլիայում գոնէ խոհեմ մարդիկը խօսում են և բարձր ձայնով դատապարտում են լորդ Բիկոնսֆիլդի քաղաքականութիւնը։ Աւստրիայում խոհեմ մարդկերանց ստիպում են լռել և ամբողջ դաշտը տուած է Անդրաշին և նրա բարեկամ ունդարացիներին, որոնք պատերազմը Ռուսաստանի հետ իրանց համար փրկութեան միակ միջոց են համարում։

«Երկարօրէն չեմ խօսի դրա պատճառները մեկնելու համար, բաւական է ասել, որ յայտնած պատերազմը (եթէ նա կը լինի) ոչ թէ Ռուսաստանի դէմ կը լինի, այլ սլավեանների դէմ։ Մենք ինքն ըստ ինքեան ատելի ենք ունդարացիներին, բայց երկիւղալի ենք իբրև սլավեանների պաշտպան։

Այդ ատելութիւնը և թշնամութիւնը անիրաւացի և անհիմն են։ Տարաբաղդաբար այժմ ժամանակ չէ մեկնել դրա պատճառները։ Ցիմարութիւն կը լինէր դաս կարդալ մի աւազակի, որ զէնքը ձեռքին յարձակվում է։ Այդ դէպքում պէտք է պաշտպանվել։ Ունդարացիները մեզ վրա զէնք են բարձրացնում. մենք պէտք է նրանց զինաթափ անենք, բայց արդեօք այդ գործի համար մենք պէտք է աշխատենք, թէ ուրիշները։ Իմ կարծիքով պէտք է ուրիշները ունդարացիներին զինաթափ անեն, պէտք է սլավեանները նրանց զինաթափ անեն, որովհետև սուրը միայն մեզ վրա չէ բարձրացրած, այլ և նրանց վրա և գլխաւորապէս նրանց վրա։

*) Պէտք է ասել, որ բամբասելը միայն Վ. Ագուլիսի սովորութիւնը. չէ։ Բամբասանքը ամեն տեղ կայ, միայն զանազան ձևերով։ Խմբ.

«ԵԹԷ ՃՇմարիտ պատերազմ կունենանք Անգլիայի հետ և այդ պատերազմը Միջին Ասիայի հողի վրա կը լինի, մենք բաւական գործ կունենանք Անգլիայի հետ։ Հանաք բան չէ ամբողջ Ասիան անցնել ծայրէ ծայր։ Այս դէպքում Անգլիայի հետ միանալը մեզ համար շատ տխուր հետեւանքներ կունենայ։ Մինչդեռ Աւստրիան այնպիսի դրութեան մէջ է, որ եթէ իւրաքանչիւր գաւառում մի սլավեան շարժվի, նա մեզ ոչինչ վնաս չէ կարող հասցնել, մինչև անգամ կարող է ինքն վնասվել։ Վերջին ժամանակներում Ռուսաստանի մէջ շատ էին խօսում, որ պէտք է սլավոնական քաղաքականութեան հետեւել, իսկ իրանք սլավեանները միայն այդ բանի վրա էին խօսում։ Եթէ նրանց լսենք, Ռուսաստանի միակ գործը պէտք է լինի ժամանակ առ ժամանակ արիւնահեղ պատերազմ ունենալ այս կամ այն սլավեան ցեղին օտարի լծի տակից ազատելու համար և բացի այդ վարձատրել զանազան սլավեան ցեղերին ռուսաց ռուբլիներով, նրանց բանկերը, ուսումնարանները և այլն պահել։

«Այս բոլորը մինչև մի յայտնի կէտ ՃՇմարիտ է։ Եթէ հետեւենք սլավոնական քաղաքականութեանը, ուրեմն պէտք է պաշտպանենք բոլոր սլավեաններին։ Իբրև պետութիւն մենք ամենքից հարուստ և զօրեղ ենք, մենք ուրեմն պէտք է նրանց օգնենք։ Բայց դրանք էլ ձեռքերը ծալած չը պէտք է նստեն։ Որքան էլ մենք զօրեղ լինենք, ամենքին յաղթել չենք կարող, սլավեանների թշնամիները ամենքն են։ Այժմ կերևայ արդեօք հաստատվել է սլավեանութեան գաղափարը։ Եթէ Աւստրիան կը խոնարհվի կոմս Անդրաշիի առաջ և մեզ պատերազմ կը յայտնէ, սլավեանների պարտականութիւնն է եթէ նրանք իրանց մեզ հետ համերաշխ են համարում, ընդդիմանալ այդ պատերազմին ամեն միջոցներով։ Սահմանադրութիւնը նրանց միջոց է տալիս այդպէս վարվել։ Նոցա ձայնը նշանակութիւն կունենայ պարլամենտներում, որտեղ սլավեանները բազմաթիւ են։

«Աւստրո-Ունգարական զօրքերի ամենալաւ բաժինը սլավեաններից է կազմած, ամենահարուստ նահանգները սլավեաններով են բնակեցրած։ Երբ Աւստրո-Ունգարիան սլավեանների թշնամի է հանդիսանում, միթէ իրանք սլավեանները իրանց դէմ կերթան։ Ոչ, սլավեանները չէզոք չը պէտք է մնան, եթէ Ռուսաստանի և Աւստրո-Ունգարիայի մէջ պատերազմ ծագի։ Նրանք պէտք է գործեն և պէտք է գործեն մեզ հետ ձեռք ձեռքի տուած մեր ընդհանուր թշնամիների դէմ։ Եթէ ոչ պատմութիւնը կը դատապարտէ այն ստրուկ ցեղին, որ ինքն իր դէմ, իր շահերի և ազգութեան դէմ գործել է։ Աւստրո-Ունգարիայի սլավեանները միայնակ չեն լինի, նրանց ձեռք կը մեկնեն Սերբիա և Զերնօգորիա։ Սլավեանների մասին ունգարացիները այսպէս են խօսում. «սլավեանները ոչինչ չեն կարող, դոքա բեռնակիր անասունների հօտ են կազմում, որ հպատակ է Հաբսբուրգի սերունդին։ Նոքա այն կողմը կերթան, որ-կողմը Հաբսբուրգները կը հրամայեն։ Ժամանակ է, որ սլավեանները հաստատեն, թէ այդ կարծիքը ՃՇմարիտ չէ։»

ՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Կ. Պոլսի լրագիրներում կարդում ենք։ «Սսոյ Կաթողիկոսին կողմանէ քաշուած է հեռագիր առ Մեծ Եպարքոսն, զոր թարգմանել արժան համարեցաք։—«Գօզան-օղլու Ահմէտ փաշայի երկրակալութեան դիմամբ Գօզանի նահանգը գալուն պատճառաւ մեր վայելած անդորրութիւնը ու ապահովութիւնը կորսուած, և ըստ պահանջման ներկայ եղանակին՝ մեր ազգայինք բացօթեայ գտնուելով, ամեն մէկը մէկ մէկ կողմ փնացած, և կենաց ու ընչից կողմանէ մեծ տագնապի մէջ էին։ Աստուած միշտ մինչև ցվախճան աշխարհի իւր կայսերական գահոյից վրայ հաստատ պահէ մեր Օգոստափառ Սուլթանը. Նորին Վեհափառութեան հրամանաւ Պօլսէն վսեմափայլ Իզզէթ փաշայի հրամանատարութեամբ այս կողմը ճանրայ հանուած զօրքը հասնելուն պէս, մեր կենաց ու ընչից ապահովութիւնը վերահաստատեցաւ և տագնապը փարատեցաւ։ Իզզէթ փաշայի և հետը գտնուող հրամանատարաց բարւոք միջոցներուն շնորհիւ ապահովութեամբ և ողջամբ դարձանք մեր տունները. և այսօր կատարեալ ապահովութեան ու անդորրութեան մէջ ըլլալով՝ կը համարձակիմ ի դիմաց ազգիս գոհունակութիւնն ու շնորհակալութիւն մատուցանել։»

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս 21 սեպտ.

Ձեզ լաւ ծանօթ պ. Մ. Փօրթուգալեան տեսուչ կարգված լինելով «Արարատեան ընկերութեան» Վանայ վարժապետանոցին և դիւղական նախակրթարանաց, մեկնեցաւ աստի ամսոյս 16-ին. «Արարատեան ընկերութեան» նկատմամբ մի յատուկ նամակ կը գրեմ ձեզ առաջիկայ շաբաթ։

Զէյթունի պատգամաւորք մեկնեցան աստի. հոս հայք չէին գիտեր թէ ինչ վիճակի մէջ է Զէյթուն և պատգամաւորաց հաւատք չընծայեցին. մի երիտասարդ վարդապետ ընկեր տուին պատգամաւորաց, սոյն վարդապետը պաշտօն ունի Զէյթունի նկատմամբ ստոյգ տեղեկութիւններ հաղորդել։ Պատրիարքարանն կաչխատի Կիլիկիոյ հայոց, և մասնաւորապէս Զէյթունի վիճակն բարւոքել. Ներսէս պատրիարք հարկաւոր ջանքերն չը խնայէր որ եթէ հնար է Զէյթուն հայ կառավարիչ մը դրուի և տուրքերն թեթևնան. Զէյթուն 1860-էն առաջ 30,000 ղուրուշ տուրք կը վճարէր, այժմ 500,000 ղուրուշ կը վճարէ։ Սակայն Սիսի Մկրտիչ Կաթողիկոսը հեռագրով կիմացնէ Դրան թէ գոհ են կառավարութենէն. հեռագրի պատճէնն ներփակեալ կը գտնէք տպագրեալ։ Զեմք գիտէր թէ ինչ բանի համար օծեալ գլուխներն թիւրք կառավարութեան վատթար վարչութեան այդքան սիրահար են։

Հայկական խնդրոյ մասին ազգային երեսփոխան պ. Պէկեան յատենի ժողովոյ ամբաստանած լինելով զՊատրիարքն ընդհանուր ժողովն յանձնաժողով մը կազմած էր սոյն ամբաստանութիւնն քննելու. յանձնաժողովը իւր աշխատութիւնն աւարտելու մօտ է։ Արդար և ամբաւիր կը գտնէ թէ Ներսէս պատրիարքն և թէ մեր պատգամաւորներն։ Պ. Պէկեան որ յայտարարած էր թէ կարևոր թղթեր ունի ի ձեռին եւ ոչ մի թուղթ կարող եղաւ ներկայացնել։ Վաղը ազգային ժողովը նիստ ունի և այդ խնդրով պիտի զբաղի. արդիւնքը կը հաղորդեմ։ Մեր Բերլինի պատգամաւորաց մին կարծեմ մի տեսր պիտի հրատարակէ մօտ օրերս իրենց կատարած պաշտօնի նկատմամբ։

Լուր եղաւ թէ մի մասնաժողով պիտի ընտրէ կառավարութիւնը Խրիմեան եպիսկոպոսի նախագահութեան ներքոյ Հայաստանի վիճակն քննելու համար, սակայն այս լուրն ստուգութեան չատ կարօտ է։

Ներսէս պատրիարք ամեն առաջնորդներու գրած է որ չարունակ ընդարձակ տեղեկութիւններ հաղորդեն Հայաստանի հարստահարութեանց մասին։

Ազգային քաղաքական և կրօնական ժողովներն որոշեցին որ Պատրիարքն սոյն ժողովոց դիւաններու հետ միացեալ, միշտ դեսպանաց դիմէ, Բերլինի դաշնագրի 61-ին յօդ. գործադրութիւնը պահանջելու համար։ Անգլիոյ դեսպան Լէյարդ Թուի թէ սրտմտած է որ պատրիարքարանն ամեն դեսպանաց կը դիմէ փոխանակ միայն Անգլիոյ դիմելու։ Սակայն ինչ իրաւամբ կը սրտմտի։ Կարծեմ Լէյարդ պատրուակ մը կը փընտռէ որպէս զի որչափ հնար է սակաւ խօսի թիւրք կառավարութեան հետ Հայաստանի բարեկարգութեան մասին. մեք տակաւին կը սպասեմք բարեկարգութեանց սկզբնաւորութեան, թէպէտ Կարնոյ և չրջակայից պատահարներն ձեզ լաւ ծանօթ կը լինեն, սակայն կը խրկեմ քաղքիս եւրոպական մի թերթի նամակն, որմէ կը տեսնէք թէ ասա՛ ես հայ եւ եւրոպական մամուլն միշտ բողոքելէ չը դադրիր, բայց «Ձայն բարբարոյ յանապատի։»

Պօլսոյ քաղաքական վիճակն յոռի է. ուստ Սան-Սթէֆանօյէն քանի որ կը քաշուին, ոճրագործութիւնք այն կողմերն հետզհետէ կը սաստկանան. Դրամական վիճակն անտանելի է, յանձնաժողովներ կազմուեցան սակայն տակաւին ոչինչ կարող եղան ընել. Թղթադրամը չատ ինկած՝ 325 դահեկանը մէկ ոսկի կարժէ, փոխանակ դի 110 դահեկանը մէկ ոսկի պիտի արժէր. ամսականով ապրողներն, որ Պօլսոյ մեծամասնութիւնն է, թղթադրամի պատճառաւ չատ խղճութեան մէջ են։ Հետզհետէ կը հասնին գերի զինուորներն և փաշայներն։ Այն ինչ կը հասնին փաշայներն կը ձերբակալուին և դատաստանի կենթարկուին. սակայն ինչու դատուին. սպարապետէ սկսեալ մինչև հարիւրապետն իրր մատնիչ կը նկատուին ով յանցաւոր չէ։ Սպարապետ, ընդհանուր հրամանատարք ամենք ամբաստանեալ աքսորեալ, բանտարկեալ են։

Հ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրներին հաղորդում են, որ չաբաթ օր, սեպտեմբերի 16-ին (28-ին) Կ. Պոլսում, բոլոր քաղաքը լուսաւորելուց յետոյ, սկսվեցաւ Ղուրբան-Բայրամի տօնախմբութիւնը։ Տօնախմբութիւնը, ինչպէս առհասարակ, բացեց սուլթանը. այդպիսի դէպքերում կատարվող սովորական կարգերից հրաժարվելը կայանում էր միայն նրա մէջ, որ Աբդուլ-Համիդը աչքի առաջ ունենալով ժողովրդի կասկածելի դրութիւնը, աղօթելու չը գնաց Մահմէդի մէչիդը Ստամբոլում, այլ վերադարձաւ ուղղակի Եալդիզլի-կեօշկ, և նամազը կատարեց Դոլմաբախչէյի գըլխաւոր մուտքի հանդէպ գտնվող Ֆունդուկլի փոքր մէչիդում. իսկ յետոյ ընդունեց Բ. Դրան պաշտօնեաներուն։

—Մալտա կղզու վրա գտնված հնդկական զօրքերը հրաման ստացան վերադառնալ Հնդկաստան, «Հիրչի հեռագրական ընկերութիւնը» հաղորդում է, որ նրանց կուղարկեն Բոմբէյ։

—Լրագիրների մէջ տպվեցաւ Հնդկաստանի նախկին փոխարքայի նամակը, որով նա խորհուրդ է տալիս Աֆղանիստանի հետ պատերազմ չը սկսել։ Այդ նամակը կը տպենք հետեւեալ համարներից մէկում։

—Պերայից հեռագրում են, որ անգլիական դեսպան պարոն Լայարդ հոկտեմբերի 2-ին, 5 ժամ տեւող տեսակցութիւն ունեցաւ սուլթանի հետ. Ասում են, որ Մուխտար-փաշան Կրիտ կղզուց յետ կը կանչվի և նրա պաշտօնը մէկ ուրիշին կը յանձնվի։

—Աթէնքից լրագիրներին հեռագրում են, որ յարաբերութիւնները յունաց և թիւրքաց կառավարութիւնների մէջ լարված են։ Թիւրքաց զօրքերը կենտրօնանում են յունաց սահմանների մօտ։

—Բելգրադից լրագիրներին հաղորդում են, որ Սերբիայի սահմանները որոշող մասնաժողովը ուղևորվեց Նիշ, որտեղ կը սպասի իր թիւրք անդամի ժամանելուն և յետոյ կը սկսի իր աշխատանքները։

—Կ. Պոլսից «Times» լրագրին գրում են սեպտեմբերի 30-ից, որ մինչև այդ օրը թիւրքաց թղթադրամի գինը ընկնում էր։ Գները ոչինչ միջոցներով չեն կարողանում բարձրացնել, այդ պատճառով ֆինանսների մինիստրի դրութիւնը ապահով չէ։ Սուլթանի մի քանի բարեկամներ նրան խորհուրդ են տալիս մերժել աւստրիական դաշնադրութիւնը և Անգլիայի առաջարկած Փոքր-Ասիայում մացնելի ռէֆօրմների նախագիծը։

—Սիմլայից լրագիրներին հաղորդում են, որ էմիր Շեր-Ալի զօրքեր է պատրաստում անգլիական յարձակմունքին ընդդիմադրելու համար։ Մինչև այժմ չէ ստացվել էմիրի նամակը, որին Հնդկաստանի կառավարութիւնը անհամբերութեամբ սպասում է։

—«Ռէյտերի ընկերութեանը» Կ. Պոլսից հեռագրում են, որ Սավֆէտ-փաշա յոյս ունի համոզել անգլիական կառավարութեանը թիւրքաց նոր փոխառութիւնը ապահովել Կիպրոս կղզու եկամուտներով։ Մի և նոյն ժամանակ մի մասնաժողով կը քննէ Կիպրոսի ֆինանսական դրութիւնը, որպէս զի ճշդութեամբ որոշվի ծախսերի մնացորդը, որ Անգլո-Թիւրքաց դաշնադրութեան համեմատ Բ. Դրան է պատկանում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրները հաղորդում են որ այս օրերս վախճանվեցաւ գերմանական Գոթա քաղաքում երևելի աշխարհագրող և «Geographische Mittheilungen» ուսումնական ամսագրի հրատարակող Ա. Պէտերմանն։ Այդ գիտնականի նախագծով և թելադրութեամբ կատարվեցան գիտնական արշաւանքներից չատերը, օրինակ գիտնական արշաւանքը դէպի հիւսիսային բևեռ։ Կարծում են որ հանգուցեալը թունաւորեց իրան ընտանեկան անբաւականութիւնների պատճառով։

***

Ներկայ տարվայ ամառը վախճանվեցաւ Զըմիւռնիայում ամենահին հայոց լրագրի «Արշալոյս Արարատեանի» խմբագիր և հիմնող Ղուկաս Գ. Պալդազարեան։ Լրագիրը արդէն 38 տարի գոյութիւն ունի։ Խմբագրութիւնը կը շարունակի հանգուցեալի անունով նրա որդին Երուանդ Ղ. Պալդազարեան։

***

Լրագիրներում տպված են մի քանի անեկդոտներ, որոնք հաւաքած են Հերցեգովինայում։ Նրանք հարց և պատասխանի ձև ունեն։ Հարկաւոր ենք համարում տպել դրանցից մի քանիսը։ Ունենք արդեօք մի բան, որ թիւրքին չը պատկանէր, հարցնում է որդին հօրից։—Ունենք, պատասխանում է հայրը, մեր հոգիները և խոզերը թիւրքին չեն պատկանում։

Ղօրանի համեմատ կարող է քրիստոնեան դրախտը գնալ։

—Կարող է, եթէ նա 40 տարի կը ծառայէ թիւրքին և թիւրքի ձեռքով կը սպանվի։

—Պապ, ինչ կարծիք ունէք օրիորդների մասին։

—14—16 տարեկան հասակը նոքա պիտանի են սուլթանի համար, 16—18 տարեկան հասակը մեծ վիզիրի համար, 18—20 ամենքի համար, իսկ 20 տարեկան հասակից յետոյ բոլորովին անպիտան են։

—Ի՞նչ տեսակ կանանցից պէտք է վախենալ։

—Իւրաքանչիւր պառաւ օրիորդից, երիտասարդ հովուհուց և չողոքորթող կաթոլիկուհուց։

—Զերնօգորցի, ինչպէս անցկացրիր երեխայութիւնդ։

—4—6 տարեկան հասակը հաւեր էի պահում, մինչև 9 այծեր էի արածեցնում, մինչև 12 ոչխարների հովիւ էի, իսկ 12 տարեկան հասակում ինձ հրացան տուին և ես գնացի հայրենիքս պաշտպանելու։

—Հաչեմ ես դու, թէ քանի անգամ ես ծեծել կնոջդ։

—Ոչ, ես համբոյրները և հարվածները երբէք չեմ հաչում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 2/14 հոկտեմբերի։ Բ. Դուռը տեղեկութիւն է ստացել, որ ռուսները շարունակեցին ուղևորվել դէպի Ադրիանօպոլ։

ԲԵԼԳՐԱԴ, 2/14 հոկտեմբերի։ Մինիստրութեան հրաժարականը ընդունված է։ Նոր կաբինետը կազմվեցաւ հետեւեալ անձինքներից. Բիստիչ մինիստրների խորհրդի նախագահ և արտաքին գործերի մինիստր, Մատիչ արդարութեան մինիստր, Ալիմպիչ հասարակական աշխատանքների մինիստր, Միլայկովիչ պատերազմական մինիստր։ Իովանովիչ և Վասիլեվիչ մնում են իրանց պաշտօններում։

ԼՕՆԴՕՆ, 2/14 հոկտեմբերի։ Պէշավերի մէջ ստացվել էին նամակ Հնդկաստանի փոխարքայից էմիրի մօտ ուղարկած բնիկ դեսպանից

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 97 ր., երկրորդ 95 ր. 75 կ., երրորդ 95 ր. 75 կ., չորրորդ 95 ր. 62 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 233 ր., երկրորդ 228 ր. 75 կ., արևելեան 92 ր. 65 կ., ոսկի 8 ր. 16 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24 1/8 պէնս։ Տրամադրութիւնքէ։ ամուր

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐԿԱՒՈՐ է մի տուն, որի մէջ տեղաւորվի Թիֆլիսի գլխաւոր պօլիցիմէյստեր, նրա կանցելարիան և հրաշէջ գունդը իր սայլերով։ Տունը պէտք է լինի քաղաքի կենտրօնում, պէտք է ունենայ ախոռ 36 ձիաների համար, նոյնպէս մեծ քակ և յարմարաւոր մուտք։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ իրանց տունը յիշեալ բնակարանի համար տալ ցանկացողներին հրաւիրում է մինչև հոկտեմբերի 5 յայտնել վարչութեանը տան վարձի մասին մանրամասն պայմանները,

1—3

ՄԵՏԱՔՍԵՂԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ ԹՈՎՄԱՍ ԽԱՆԴԱՄԻՐՕՎԻ (նախկին ԽԱԼԱԹՕՎԻ) տեղափոխված է Վելիամինովկայա փողոցի վրա գտնվող Խոսրոեվի տանից Երևանեան հրապարակի վրա ԽԱՐԱԶՕՎԻ տանը, Թիֆլիսի փոխադարձ կրէդիտի ընկերութեան շինութեան տակ։ Յայտնելով սրա մասին Թիֆլիսի հասարակութեան, մեծայոյս եմ որ նա իր այցելութիւնները չի պակասեցնի իմ մագազինից, հաւատացած լինելով, որ ինձանից դուրս եկած ապրանքները լաւ յատկութիւններ ունեն և գները չատ չափաւոր են։ 3—6

МАГАЗИНЪ шелковыхъ товаровъ ТОМАСА ХАНДАМИРОВА (бывшій ХАЛАТОВА) перемѣщенъ съ Вельяминовской улицы дома Хосроева на Эриванскую площадь въ домъ ХАРАЗОВА, подъ Тифлисскимъ обществомъ взаимнаго кредита. Объявляя о семъ Тифлисской публикѣ льщу себя надеждою, что она не оставитъ своимъ посѣщеніемъ мой магазинъ съ тою увѣренностью, что отпускаемые мною товары будутъ доброкачественные и цѣны самыя умѣренныя.—

3—6

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՐՕՏԱՆ (учебная рота) հրաւիրում է ցանկացողներին կապալով վերցնել բօտայի մէջ ծառայողների համար հարկաւոր եղած ՄՍԻ ԵՒ ՄԻԻՍ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՍՑՆԵԼԸ։ Ցանկացողները հրաւիրվում են աճուրդին ներկայ լինելու համար բօտայի զօրատունը, իւնկերների ուսումնարանի մօտ, սեպտեմբերի 25-ին առաւօտեան 10 ժամին։

Լոյս տեսաւ

«ՆԱԽՍՊԱՏՀԱՐՄՈՒՆՔ»

Անունով մեր աշխատասիրութեան I հատորը, որ պարունակում է իր մէջ մեր կեանքից առնված 600-ից աւելի նախապատշարումներ։—Գինն է 50 կ.։

Կարելի է ստանալ հետևեալ հասցէով.—«Въ Тифлисъ.—Кавказская книжная торговля З. П. Грикурова.»

Ց. Նազարեանց

Մամուլի տակից դուրս եկաւ և ծախվում է Ս. Մանդինեանի հետևեալ աշխատութիւնները.

1) ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ և ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ, երրորդ տարվայ ուսմունք և ընթերցմունք. գինն է 65 կ.։

2) ՀԱՄԱՌՕՏ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ. գինն է 1 ր. 50 կ.։

5—6

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ իր ներկայութեամբ հոկտեմբերի 18-ին 1878 թ. նշանակված է աճուրդ առանց կրկնաճուրդի Նաֆթլուի նաֆթիի հորերի եօթը համարները դատարկ տեղի հետ կապալով տալու համար։

1—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ հոկտեմբերի 18-ին ներկայ տարվայ իր ներկայութեամբ կը լինի աճուրդ առանց կրկնաճուրդի Մնացականեան կամուրջի մօտ կուր դեռի վրա գտնվող երկու պարօնների պահելը կապալով տալու համար երեք տարի ժամանակով։

1—2

«Մեր Կովկասի հիմիկվան լրագիրներ» կամ «Թռչող միաք» անունով նոր դուրս եկած բրօշիւրը ծախվում է հատը 15 կոպէկով միմիայն Զաքարեայ Գրիգորեանի և Զարկվիանի գրավաճառանոցներում Ալէքսանդրեան այգի դիմաց։

Գրիգոր Տէր-Մելքիսեդեկեան

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱԼԽՏԻՑ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕՐԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՐԼ ՅԱԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԻՅՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՄԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ։

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԴԱՎԼԷՐԷՈՒՄ)

Վաճառում են Բերլինի կօնգրէսին ներկայացած հայ-պատգամաւորների լուս կարպատկերները՝

1. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ մեծ դիրքով (կաբինէտնի) . . . . . 60 կ.
2. ԽՈՐԷՆ ՆԱՐԲԷՑ փոքր դիրքով (վիզիտնի) . . . . . 30 »
3. ԽՈՒՄԲ վերոյիշեալների իրանց քարտողարներով . . . . . 60 »

Օտար քաղաքներից դումարով գնողներին 50 և 25 կ. իւրաքանչիւրը։

1—3

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԴԱՎԼԷՐԷՈՒՄ)

Վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը՝

	Ր.	Կ.
1. Ն. Տէր-Ղևոնդեան՝ Մայրենի լեզու. ա. տարի վեցերորդ տիպ.	—	35
2. » » բ. տարի չորրորդ տիպ.	—	40
3. » » գ. և դ. տ. երկր. տիպ.	—	70
4. Ղ. Աղայեանց՝ Ուսումն Մայրենի լեզուի, երրորդ տիպ.	—	15
5. Տէր-Ստեփանեանի՝ Ակզբունք քրիստոնէական հաւատոյ.	—	50
6. Գ. արքեպ. Այվազեան՝ Նախակրթանք գրաբար լեզուի մ. ա. հինգերորդ տիպ.	—	40
7. Տէր-Դաւթեանց՝ Русское Слово	—	35
8. Աբովեանց՝ Հայոց պատմութիւն երկրորդ տիպ.	—	60
9. Հատընտիր ընթերցուածք ի մատենագրաց նախնեաց՝ հանդերձ ծանօթութեամբք Վիէննա Թոռնեան՝ . . .	4	—
10. Թորոս Լևոնի պատմական վէպ ազգ. կեանքից	1	—

Այս օրերս կը ստանանք Վիէնեակից Առձեռն բառարաններ, Հայաստանի քարտէզներ և ընտիր մատենագիրների աշխատութիւններից շատերը։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Հոկտեմբերի 3-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	25
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1520	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1235	—
Վիգրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	232	—
Երկրորդ 5% վիգրիչնի »	228	—
Մարսելի կուրսը 251½—	100	—
Լօնդոնի կուրսը Օդեսայի վրա.	9	97
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Դաւրեմի բարաթը. . .	5	70
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	60
» միւս տեսակը.	7	45
» չաքարաւազը.	6	40
» տրանզիտը. .	6	—
» մաքսը վճարած	11	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	—
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուշի . . .	7	25
» թարաքամի .	4	—
Ալիւր Շորագալու . .	2	—
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	30
Մոմը բնաճարպի (стеар.)	12	40
Մետաքս Նուխվայ. .	210	—
Կախեթունը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	45	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	60	—
Կոֆէն մօկօի. . . .	26	—
» լիվանի . . .	22	—
» մարտինիքինը	17	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . .	1	
Ռուսաստան	2	
Աւստրիա .	3	
Անգլիա.	4	
Գերմանիա	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Մանդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ. Առանձին սենեակներում ամիսը 30—50 րուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով.

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	

	առաւօտ.	
Փոթիից . .	9. 13	
Ռիօն . . .	12. 13	
Միխայլօվօ. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բացուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	կոպ.
Բաց նամակը արժէ	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը 8-ից մինչև 10 ժամը յունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը։

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ 10-ից մինչև 11 ժամ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակտ վենէրական և կաշու հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Պէտնով աչքի հ.։

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Բակտ կրծքային և ջղային հ.։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակտ կրծքային հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների 10—11 ժամ, Կ. Բախուտով կանանց և ջղային հ.։

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բակտ կրծքային և ջղային հ. Պէտնով աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԹԻՖԼԻՍ. Զ. Դուք անբաւական էք սեպտեմբերի 28-ի ներկայացումից, իսկ մենք այդպիսի ներկայացումներ շարունակութիւն ենք համարում, որ նաւանդ պ. Գ. Զ.-ի հետևեալ համարում տպվելու նամակը կարդալուց յետոյ։

—ՄՕՍԿՎԱ. Գ. Խ. Նամակը այժմ չարժէ տպել, բաւական հնացել է և բացի այդ վիրաւորական է մեր նամակագրի համար։

—ՁԱՐԴԱԽԼՈՒ. Ց. Մ. Հազարդեցէք նորից ձեր հասցէն և այնպէս գրեցէք, որ մենք բան հասկանանք։ Լուրը կը տպենք։

—ՇՈՒՇԻ. Վաճառական. Ցօդուածը առանց կարդալու գցինք զամբիւղը, տաւերը մեանցից անկարելի էր զանազանել։

Дозволено Цензурою 3 Октября 1878 г. Тифлисъ

Типографія Мартиросіанца

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ